ԾՐԱԳՐԻ ՆԱԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի անվանումը - «Առառաջին բուժօգնության գարնանային դպրոց»

Իրականացման վայր - ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Արտանիշ

Իրականացման ժամկետներ – 29.03.2019 - 30.04.2018

Մասնակիցների ընդանուր թիվը - 30 (երեսուն)

Ծրագրի նպատակն էր. ***Նպաստել հայաստանաբնակ 16-30 տարեկան երիտասարդների անձնական անվտանգության և առաջին բուժօգնության վերաբերյալ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների հարստացմանը, որպեսզի նրանք էքստրեմալ իրավիճակներում և արտակարգ պատահարների դեպքում գործեն առավել պատրաստված ու գրագետ, անհրաժեշտության դեպքում տուժածներին ցուցաբերեն ճիշտ առաջին օգնություն և բուժօգնություն:***

Ծրագրի խնդիրներն էին՝

- *Կազմակերպել և անցկացնել «Անվտանգություն» և «Առաջին բուջօգնություն» թեմաների վրա հիմնված հնգօրյա գարնանային դպրոց ՀՀ տարբեր մարզերում բնակվող 16-30 տարեկան 30 երիտասարդների մասնակցությամբ:*
- *Առաջին բուժօգնության գարնանային դպրոցի աշխատանքների շրջանակում երիտասարդներին տալ տարբեր իրավիճակներում անվտանգության և առաջին բուժօգնության բազային գիտելիքներ, իրականացնել գործնական վարժանքներ:*
- *Առաջին բուժօգնության հնգօրյա դպրոցի ընթացքում տեսական և գործնական գիելիքներով հզորացնել 30 երիտասարդ տղաների ու աղջիկների անձնական հատկանիշները, կարողությունները և ներուժը՝ սովորեցնել տարբեր իրավիճակներում անձնական անվտանգության կանոնների պահպանում, վախերի հաղթահարում, արտակարգ իրավիճաներում գոյատևում, պատահարների դեպքում տուժածին անհրաժեշտ առաջին բուժօգնության ցուցաբերում և այլն:*

Ծրագրի հաստատման տեղեկությունը ստանալուն պես մեկնարկել են ծրագրային գործողությունները: Ծրագրի աշխատանքային խումբը հավաքվել է ժողովի ու քննարկել ծրագրի ժամանակացույցն ու ծրագրային առանձին գործողությունների իրականացման մանրամասները:
Հստակեցվել են ծրագրի մասին հայտարարության պատրաստման ու տարածման, հայտադիմումի մշակման ու տարածման ժամկետները, դասընթացին մասնակցության համար դիմելու վերջնաժամկետն ու մասնակիցների ընտրության

չափանիշները:
Մշակվել են ծրագրի մասնակցության հայտարարությունն ու իրավերը, հայտադիմումի ձևանմուշը:
Հայտարարությունը տեղադրվել է «Հայկական ճամբար» ՀԿ-ի և գործընկեր «Սպարտա» գոյատևման կենտրոն» կազմակերպության Ֆեյսբուք սոցիալական ցանցի էջերում, ապա տարածվել Ֆեյսբուքում՝ հետաքրքրված երիտասարդների կիսվելու և գրառումների միջոցով:
Ֆեյսբուք սոցիալական ցանցում նաև ստեղծվել է «Առաջին բուժօգնության գարնանային դպրոց» միջոցառումը, որին միացել, իրենց հետաքրքրվածությունն էին արտահայտել 623 մարդ: Միջոցառման մասին գրառմամբ կիսվել էին 80 անգամ:
Վերջնականացվել և մասնակիցների համար տպվել է "Անվտանգություն և առաջին բուժօգնություն" դասընթացի օրակարգը:
Գնվել, տպագրվել ու նախապատրաստվել են հնգօրյա դասընթացի անհրաժեշտ նյութերը, պարագաները, միջոցները, հավաստագրերը, մասնակիցներին տրամադրվելիք խտասկավառակները: Մասնակիցներին տրամադրվող ամբողջ նյութը ձայնագրվել է էլեկտրոնային կրիչների՝ դիսկերի վրա, մասնակիցներին բաժանելու նպատակով:

Ծրագրի հայտարարությունը տարածվել է 02.04.2019թ:
Ծրագրին դիմելու վերջնաժամկետ է սահմանվել 15.04.2019թ:
Ընդանուր առմամբ ծրագրին մասնակցելու համար ստացել ենք 123 հայտ:

Դասընթացի մասնակիցների ընտրության մասին դիմողները տեղեկացվել են 18.04.2019թ:
«Առաջին բուժօգնության գարնանային դպրոց» հնգօրյա դասընթացն անցկացվել է 24-29.04.2019թ:

Դիմելու վերջնաժամկետից հետո ծրագրի թիմի կողմից դիտարկվել են բոլոր 123 հայտերը և ընտրվել են ծրագրի 30 մասնակիցները՝ պահպանելով տարիքային նվազագույն (16 տարեկան) և առավելագույն (30 տարեկան) շեմերը, սեռային և աշխարհագրական բալանսը:
Ըստ նախանշված մոտեցման՝ դասընթացը ներառական էր, ընտրվել էին նաև հաշմանդամություններ ունեցող մասնակիցներ:

Ընտրված մասնակիցների հետ հեռախոսակապի միջոցով ծրագրի կամավորները կապ են հաստատել՝ նախնական տեղեկացման և նրանց կողմից մասնակցությունը նաև բանավոր հաստատելու նպատակով:
Բոլոր հյատատու երիտասարդները էլ փոստի միջոցով ստացել են ծրագրի մասնակիցների ընտրության արդյունքների մասին տեղեկացնող նամակներ:

Ընտրված մասնակիցներին էլեկտրոնային փոստի միջոցով նախապես ուղարկվել է ծրագրի ամբողջական տեղեկատվական փաթեթը, դասընթացի օրկարգը,

կազմակերպչական այլ մանրամասներ:
Երևանից ծրագրի մասնակիցների տեղափոխությունը միջոցառման անցկացման վայր և ետ դեպի Երևան կազմակերպվել է ծրագրի միջոցներով:
Դասընթացի անցկացման վայր էր ընտրվել Արտանիշ գյուղի ափամերձ տարածքը, ուր անցկացվեց հնգօրյա գարնանային դպրոցը:
Գարնանային դպրոցի մեկնարկին իրականացվել է մասնակիցների գիտելիքների նախաթեստավորում 49 հարցերից բաղկացած թեսթի միջոցով, ապա դասընթացի ավարտին՝ հետթեսթավորում: Նախաթեսթավորման և հետթեսթավորման վերլուծությունը բացահայտում է մասնակիցների գիտելիքների աճը ծրագրի ընթացքում՝ թվային արտահայտությամբ (լրացված բոլոր թեսթերն ու դրանց վերլուծությունը կցվում է հաշվետվությանը): Կարող ենք փաստել, որ «Առաջին բուժօգնության գարնանային դպրոց» ծրագիրը գրանցել է մասնակիցների թեմատիկ գիտելիքների 38% աճ:
Ծրագրի ավարտին մասնակիցները ստացել են «Առաջին բուժօգնության գարնանային դպրոց» ծրագրի մասնակցության հավաստագրեր՝ «Հայկական ճամբար» և «Սպարտա գոյատևման կենտրոն» ՀԿ-ների ղեկավարների ստորագրություններով (օրինակը կցվում է հաշվետվությանը):
Ծրագրի ողջ ընթացքը լիովին համապատասխանել է նախապես հաստատված ծրագրային առաջարկին:

Ծրագրի հիմնական թեմաներն էին՝ "Անվտանգությունն" ու "Առաջին բուժօգնությունը": Հաշվի առնելով, որ մենք պատերազմող երկիր ենք, որ մեր երիտասարդների շրջանում արշավները, էքստրեմալ մարզաձևերն ու ժամանցի ձևերը դառնում են ավելի ու ավելի մասսայական՝ անհրաժեշտություն կար երիտասարդներին տալ վերոնշյալ թեմաներից բազային գիտելիքներ, նրանց շրջանում ձևավորել պատահարների դեպքում, արտակարգ իրավիճակներում գործելու կարողություններ ու հմտություններ:
Մասնակիցներին տեսական և գործնական վարժանքների միջոցով մատուցվել են հետևյալ հիմնական թեմաները՝ «Արտաքին ազդակների ազդությունը օրգանիզմի վրա», «Անվտանգությունը ջրում», «Անվտանգությունը սառույցի վրա», «Անվտանգությունը կենդանիների հետ շփվելիս», «Վերքեր, վնասվածքներ», «Արյունահոսություններ», «Տուժածի շտապ դուրս բերում և տեղափոխում», «Վիրակապում», «Սիրտ-թոքային վերակենդանացում», «Շնչառական ուղիների փակումը օտար մարմիններով», «Կողային անվտանգ դիրք», «Հիստերիկ և էպիլեպտիկ նոպաներ»:

Սևանի լճափնյա բազայում հնարավորինս իրականին մոտ վարժանքային իրավիճակներում ծրագրի մասնակից 30 երիտասարդները սովորեցին առաջին բուժօգնության հիմնաքարային դրույթներն ու անհրաժեշտ գործողությունները:
Գործնական վարժանքների ժամանակ իրականացրեցին վնասված վերջույթի անշարժացում ձեռքի տակ եղած պարագաներով, վիրակապումներ տարբեր վիրակապերով, տուժածի շտապ դուրս բերումն ու տեղափոխումը, սիրտ-թոքային

վերակենդանացման գլխավոր միջոցառումները՝ կրծքային սեղմումներ և կրծքային ներփչումներ: Հատուկ վարժանքային մանեկենների վրա փորձարկեցին շնչուղիների փակման դեպքում կիրառվող գործողությունները, յուրացրեցին կողային անվտանգ դիրքի կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Դասընթացի հիմնական թեմատիկ բլոկները ներկայացվեցին գործընկեր "Սպարտա" գոյատևման կենտրոն" ՀԿ-ի փորձագետ Սպարտակ Հովհաննիսյանի կողմից:

Գարնանային դպրոցի ծրագիրը հնարավորություն տվեց մասնակիցներին նաև արշավել դեպի Արտանիշի տեսարժան վայրերը, մասնակցել բազայի տարածքի բարեկարգման աշխատանքներին և ծառատունկ իրականացնել:

Ծրագրի մասնակիցների կողմից ստեղծվել է ֆեյսբուքյան խումբ, ուր շարունակաբար պահպանվում է կապը ծրագրի թիմի և մասնակիցների միջև: Խմբում տեղադրվում են թեմատիկ նյութեր, տեսանյութեր, ծավալվում են քննարկումներ:

Կա նաև մեսինջերի «չաթ», որտեղ տարբեր համայնքներում ապրող և դասընթացի ժամանակ ծանոթացած երիտասարդները միմյանց հետ ավելի անմիջական են շփվում տարբեր թեմաներ են քննարկում, պայմանավորվում են հանդիպումների ու միասին ժամանցի կազմակերպման մասին:

Վստահաբար հաստատում ենք, որ ծրագիրը հասել է իր նախանշված արդյունքներին՝

1. ***Առաջին բուժօգնության հնգօրյա գարնանային դպրոցի մասնակից՝ ՀՀ տարբեր մարզերում բնակվող 30 երիտասարդները տեսական և գործնական վարժանքների միջոցով յուրացրել են տարբեր պայմաններում և իրավիճակներում անձնական անվտանգության ապահովման և պահպանման կանոնները:***
2. ***Ծրագրի արդյունքում հարստացել են 30 մասնակիցների գիտելիքներն ու կարողությունները՝ նրանք կարող են անհրաժեշտության դեպքում տուժածին ցուցաբերել առաջին բուժօգնություն, հաղթահարել իրենց վախերը, գոյատևել արտակարգ իրավիճակներում:***
3. ***Սերտ կապեր են ստեղծվել տարբեր համայնքներում բնակվող 30 մասնակիցների, 4 կամավորներ երիտասարդների և Ծրագրի համագործակից կառույցների միջև:***

Ծրագիրը նպաստավոր էր մասնակից երիտասարդների անձնային աճի և սոցիալական հմտությունների զարգացման տեսանկյունից:

ՀՀ տարբեր մարզերում բնակվող 30 երիտասարդները իրենց ստացած գիտելիքները հետագայում կկարողանան կիրառել տարբեր արշավների, ճամբարների, էքստրեմալ մարզաձևերի միջոցառումների, հանկարծահաս

պատերազմական գործողությունների, արտակարգ պատահարների ժամանակ, տղաները՝ նաև զինծառայության ընթացքում:

Ծրագրի մասնակից 30 երիտասարդներին տրամադրվել են «Տուժածի հետ շփման ոսկե կանոնները» տեղեկատվական թերթիկն ու խտասկավառակներ, որոնք հնարավորություն կտան պետք եղած դեպքում վերհիշել նյութը, այն բազմացնել, կամ փոխանցել ուրիշներին:

Ծրագրի մասնակից երտասարդները հետագայում կկարողանան մարզերում կիրականացնել նմանատիպ դասընթացներ:

Ծրագրի բոլոր տարածվող նյութերում՝ մամուլի հաղորդագրություն, հայտարարություն, օրակարգ, տեղեկատվական թերթիկ, գնահատման թերթիկ, հավաստագիր, մասնակիցներին բաժանվող թեմատիկ գրքույկներ և այլն, առկա է ծրագրի ֆիանանսկան աջակից ՀՀ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության անվանումն ու լոգոտիպը: Ծրագրի մասին ինֆորմացիան, ընթացիկ նորությունները, լուսանկարները, տեսանյութերն ու դասընթացից ուղիղ միացումները տեղադրվել են «Հայկական ճամբար» ՀԿ-ի ֆեյսբուքյան էջում և միջոցառման էջում, ծրագրի մասնակիցների անձնական էջերում: Նախորդ ծրագրի շրջանակում տպագրված «Հայկական Ճամբար» ՀԿ-ի և ՀՀ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարության խորհրդանշաններով բանեռները (roll-up) օգտագործվել են նաև այս հնգօրյա դասընթացի ժամանակ, ներկայացնելով ծրագիրն իրականացնողին և ֆինանսավորողին:

Ծրագրի շրջանակում սերտորեն համագործակցել ենք "Սպարտա" գոյատևման կենտրոն" ՀԿ-ի հետ: Ծրագրին «Սպարտա» գոյատևման կենտրոն» ՀԿ-ն տրամադրել է փորձագետ-թրեյներ, հատուկ կգույք և դիտակտիկ նյութեր՝ մանեկեններ, մույաժներ, պարագաներ, սարքավորումներ, ցուցապաստառներ: Այն հանդիսանում է շահույթ չհետապնդող գիտական, հետազոտական, կրթական, տեղեկատվական կազմակերպություն: Այն մշակել է անձնական անվտանգության, գոյատևման և անհետաձգելի բուժօգնության ոլորտների տասնյակ գրքույկներ, ցուցապաստառներ և զբաղվում է նշված ոլորտներում գիտական հետազոտություններով, ուսումնասիրություններով, ուսումնական նոր ծրագրերի ու մեթոդների մշակմամբ:

Դասընթացի ավարտին մասնակիցները գնահատել են դասընթացը՝ լրացնելով անանուն գնահատման թերթիկները (դրանք կցվում են հաշվետվությանը): Մասնակիցների կողմից հինգ բալանոց սանդղակով գնահատել և մեկնաբանել են ծրագրի տարբեր կոմպոնենտները՝ դասընթացն ընդհանուր առմամբ, քննարկված թեմաների կարևորությունն ու օգտակարությունը, ստացած գիտելիքների կիրառելիությունը, ընդհանուր կազմակերպչական աշխատանքները, դասընթացավարների աշխատանքը, կեցության պայմանները, սնունդը: Անանուն գնահատման արդյունքները փաստում են մասնակիցների

գոհունակությունը այս ծրագրի կազմակերպման, իրականացման և անցկացման վերաբերյալ, հաստատում են նման ծրագրերի անհրաժեշտությունն ու կարևորությունը երիտասարդների համար: Գնահատմանը մասնակցած բոլոր 30 մասնակիցները շեշտում են, որ իրենց ընկերներին խորհուրդ կտան մասնակցել նմանատիպ դասընթացի:

Գնահատման թերթիկների միջոցով հնարավոր է դարձել նաև մասնակից երիտասարդներից հավաքագրել կարծիքներ և առաջարկություններ:

Ծրագրի մշտադիտարկումն իրականացրել է ծրագրի ղեկավարը՝ ըստ օբյեկտիվորեն ստուգման ենթարկվող ցուցիչների:

Ծրագրի ղեկավար՝ Վարդուհի Արամյան

Ֆինանսական հաշվետվություն

««Հայկական ճամբար» լեզվի և առագաստանավի դպրոց» ԲՀԿ
Պայմանագիր № 138-2019 28.03..2019թ.
,,Առաջին բուժօգնության զարնանային դպրոց,, ծրագիր

Հոդված/ ենթահոդված №	Հոդվածի/ ենթահոդվածի անվանումը	Միավոր	Քանակ	Արժեք	Նախատեսված էր	Ծախսվել է	Մնացորդ/Տնտեսում	ՀԿ-ի ֆին. Ներդրում	Մնացորդ/ Տնտեսում Ներդրումից
1	Վարձավճար, ներառյալ հարկերը								
1.1	Ծրագրի ղեկավար	անգամ	1	132,000	132,000	132,000	0		
1.2	Ծրագրի փորձագետ	անգամ	1	150,000	150,000	150,000	0		
	Ընդամենը				282,000	282,000	0	0	0
2	Տրանսպորտային ծախսեր								
2.1	Դիզելային վառելիք /Երևան-Արտանիշ-Երևան/, /3 մեքենա*250կմ*2*0.17լ+255լ/	լիտր	255	440	112,200	112,200	0		
	Ընդամենը				112,200	112,200	0	0	0
3	Կեցություն և սննդի ձեռքբերման ծախսեր								
3.1	Մասնակիցների և աշխատակազմի կեցություն Արտանիշում /30 մասնակից+6 կազմակերպիչ 5 օրով/	մարդ/օր	180	5,000	900,000	900,000	0		
3.2	Մասնակիցների և աշխատակազմի սննդի ծախս /30 մասնակից+6 կազմակերպիչ 5օրով/	մարդ/օր	180	3,000	540,000	540,000	0		
	Ընդամենը				1,440,000	1,440,000	0	0	0
	Ընդհանուր				1,834,200	1,834,200	0	0	0

Նախագահ
Կ.Տ.

Սամվել Ռոստոմյան
/անուն ազգանուն/

օր/ամիս/ամսաթիվ

«ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՅԵՐԷԶՎԻ ԵՎ ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԻ ԴՊՐՈՑ» ՀԿ
ARMENIAN CAMP LANGUAGE & SAILING SCHOOL
01233381
Բարեգործական
Հաս. Կազմ.
Благотворительная
Обществ. Орг.
Charitable
Non-Gov. Org.